ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2021թ. N ------ - Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N10-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումը.

1) Որոշման N 2 հավելվածում՝

ա.«I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Սպորտի և երիտասարդության հարցերի բաժին» գլխի 2-րդ տողի 3-րդ սյունակի «1» թիվը փոխարինել «2» թվով և գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ կետով.

5	գործավար	1

ու այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «7» թիվը փոխարինել «9» թվով:

2. Սույն որոշմամբ նախատեսվող հաստիքների ամսական պաշտոնային դրույքաչափերը սահմանվում են Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշմամբ նախատեսված ամսական պաշտոնային դրույքաչափերին համապատասխան:

3. Սույն որոշումը՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասով ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք-Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով.

Երիտասարդության պետական քաղաքականության իրականացման միակ իրավական փաստաթուղթ հանդիսացող Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի նիստի N54 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության փոփոխված Սահմանադրության չի կարող իրավական հիմք հանդիսանալ ոլորտում որևէ բնույթի իրավական ակտի ընդունման համար, այդ թվում՝ նորմատիվ, անհատական և ներքին (լոկալ) բնույթի իրավական ակտերի: Մինչդեռ Երևանի քաղաքապետի երիտասարդության ոլորտի սեփական լիազորություններն իրականացնելու համար Երևան համայնքի համար այժմեական պահանջ է երիտասարդության խնդիրների առանձնահատկություններն արտացոլող համայնքային երիտասարդական քաղաքականության մշակումն, ինչը կարող է հանդիսանալ համայնքի երիտասարդության հիմնախնդիրներին արձագանքող գործունեության ուղղությունների, առաջնահերթությունների, ծրագրերի, միջոցառումների և մեխանիզմների համակարգ:

Միաժամանակ Երևանի 2019-2023թթ. զարգացման ծրագրով նախատեսվում է իրականացնել երիտասարդության բնագավառի լայնածավալ միջոցառումներ, որոնք միտված են լուծելու երիտասարդության ոլորտի հետևյալ հիմնախնդիրները.

- Մայրաքաղաքի երիտասարդության զբաղվածության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի մշակման և իրականացման անհրաժեշտություն:
- Երիտասարդների աշխատանքային իրավունքների պաշտպանության ուղղությամբ արհմիությունների հետ համագործակցության հաստատման անհրաժեշտություն:
- Համայնքային խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի աջակցման ու խրախուսման, ինչպես նաև երիտասարդական կազմակերպություններին և երիտասարդական նախաձեռնություններին համայնքի կառավարման գործընթացին մասնակցության մակարդակը բարձրացնելու անհրաժեշտություն:
- Մայրաքաղաքում երիտասարդների շրջանում կամավորական աշխատանքի խրախուսման և համայնքում կամավորական մշակույթի խթանման անհրաժեշտություն:
- Երևան համայնքի երիտասարդական քաղաքականության մշակման անհրաժեշտություն:
- Տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության, երիտասարդության ոլորտում Երևան համայնքի իրականացվող ծրագրերի արդյունավետության բարձրացման և վերջիններիս իրականացման համար հավելյալ ֆինանսական միջոցներ ներգրավելու անհրաժեշտություն:
- Երևան համայնքի և հասարակական ու պետական կառույցների համագործակցության արդյունքում Երևանի երիտասարդական և մշակութային համայնքային կենտրոնների ստեղծման կամ առկա մշակութային կենտրոնների վերափոխման անհրաժեշտություն:
- Երևան համայնքի երիտասարդների շրջանում իրենց կյանքի տարբեր ոլորտներին առնչվող հարցերի վերաբերյալ:

Ներկայումս Բաժնում առկա է երիտասարդության հարցերով զբաղվող մեկ հաստիքային միավոր (առաջատար մասնագետ) և ոլորտում իրականացվող աշխատանքների ծանրաբեռնվածությունից ելնելով՝ անհրաժեշտություն է առաջացել Բաժնում ունենալ երիտասարդության հարցերով զբաղվող ևս մեկ հաստիքային միավոր (գլխավոր մասնագետ), որի պաշտոնի անձնագրում սահմանված կլինեն լիազորությունների, շփումների և որոշումների կայացման հնարավորինս լայն շրջանակ, քանի որ տվյալ պաշտոնը զբաղեցնող համայնքային ծառայողի գործառույթներից բխելու է շփումների լայն շրջանակ՝ պետական և տարածքային կառավարման, Երևանի երիտասարդական ոլորտի սուբյեկտների, ինչպես նաև այլ շահագրգիռ

կողմերի, կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտների հետ, քննարկումների կազմակերպման, բազմաբնույթ միջոցառումների ու քննարկումների մասնակցելու իրավասություններ:

Վերջին տարիներին Բաժնի փաստաթղթաշրջանառության աշխատանքներն իրականացվել է աշխատակազմի քարտուղարության հաստիքով աշխատող աշխատակցուհու միջոցով և այժմ պայմանավորված աշխատանքային ծանրաբեռնվածությամբ և գործառույթներն առավել արդյունավետ ու նպատակային կազմակերպելու հանգամանքով՝ անհրաժեշտություն է առաջացել Բաժնում ունենալ գործավարի մեկ հաստիքային միավոր՝ հիմնավորմամբ, որ.

2020 թվականին բաժնում ստացվել են մեծ թվով գրություններ, դիմումներ, որոշումներ, կարգադրություններ, արձանագրություններ և եզրակացություններ, որոնց բոլորին տրվել է համապատասխան ընթացք:

Միաժամանակ Բաժնի կողմից համակարգվում են թվով 41 մարզական կազմակերպություններ, որոնց հետ իրականացվում է ամենօրյա փաստաթղթաշրջանառություն՝ կապված ուսումնամարզական գործընթացի իրականացման և Լիազոր մարմնից ու Հիմնադրից ստացվող ցուցումների հետ: Բաժնի կողմից կազմակերպություններին տրամադրվում է նաև գործավարական աշխատանքների կազմակերպական ամենօրյա աջակցություն: Բաժինը տարվա ընթացքում մրցույթների հայտարարման միջոցով իրականացնում է նաև 60-65 առողջարարական, հանրային /զանգվածային/, մարզական ու երիտասարդական միջոցառումներ, որոնց փաստաթղթաշրջանառությունը ևս շատ աշխատատար է:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման Նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում ծախսերի փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ